ԴԱՐՁԵԱԼ „ՆՈՐ-ԴԱՐԻ" 25 ԱՄԵԱԿԻ ՄԱՍԻՆ

«Լումայ»-ի անցեալ համարում «Եկէք, մեր պարտքը կատարենք» խորագիրը կրող յօդուածով մենք յիշեցրինք հայ հասարակութեան, որ ներկայ տարուայ 20-ին լրանում է «Նոր-Դար» լրագրի 25-ամեակը և նորա բազմաշխատ խմբագրի հրապարակախօսական գործունէութեան 35-ամեակը. մի գործունէութիւն, որ սկսուած է Գրիգոր Արծրունու հետ և բաժանուած նորանից վերջին արևելեան պատերազմի միջոցին, որքան մեզ յայտնի է, գաղտփարների ընդհարման պատճառով։

«Մշակի» առաջնորդող յօդուածները սովորաբար գրում էին ինքը Արծրունին և Սպանդարեանը հերթով. վերջինիս մի առաջնորդողը հասարակութեան առանձին գոհունակութեան առիթ էր տուել, սակայն մի քանի օրից յետոյ Արծրունին գտել էր, որ այդ յօդուածը դէմ է իւր ուղղութեան և այդպիսով տարաձայնութիւն էր ծագել այդ երկուսի մէջ։

Այս բանի առաջն առնելու համար տ. Մարիամ Քոչարեանը (բժ. Քոչարեանի կինը), որի մօտ սովորաբար տեղի էին ունենում գրական ժողովներ, առաջարկում է Սպանդարեանին գրել միմիայն քաղաքական հարցերի մասին առաջնորդողներ, բայց վերջինս չկամենալով սահմանափակել իւր գործունէութիւնը այդ շրջանակի մէջ և համարելով իրան վիրաւորուած՝ առաջ եկաւ կատարեալ բաժանում։

Այս ամենը լաւ յայտնի պիտի լինէ այն շրջանի միւս գործողներին, պ. Ցարոյին, բժ. Քոչարեանին։ Ց. Չիգիանեանին, Ց. Տէր-Գրիգորեանին ևն։

Այնուհետև, ինչպէս մեր անցեալ յօդուածում ասացինք, նա անցաւ «Մեղու»-ին և ապա հիմնեց «Նոր-դարը», որի 25 ամեակի մասին է մեր խօսքը հէնց այժմ։

Մեր խմբագրութեան մէջ ստացուել են մի քանի տեղերից նամակներ, որոնցով հարցնում են, թէ ինչպէս պէտք է յաւերժացնել այդ յօբելեանը, երբ, ուր և ինչ ծրագրով պիտի կատարուի այն, որ իրանք էլ մասնակցեն ըստ պատշաճին։ Իսկ յատկապէս Բագուից մեզ հարցնում են, թէ ինչ եղանակով կարող են իրանք գործի հրաւիրել պ. Սպանդարեանին, մանաւանդ ազգային ներկայ հրատապ խնդիրների ժամանակ։

Երբ մասնաժողով ու ծրագիր կկազմուի այդ նպատակով, մենք 'ի հարկէ կծանուցանենք մեր թերթի մէջ և մենք հաւատացած ենք, որ ազգային-յառաջադիմական ուղղութեան համակրող հասարակութիւնը գաւառներում էլ ամեն տեղ կմտածէ, թէ ինչ եղանակով պիտի մասնակցեն այդ յօբելեանին։

Մեր ստացած մի քանի տեղեկութիւններից գիտենք, որ իրեն խմբագրին ևս առաջարկներ են եղել «Նոր-դարի» վերսկսելու առթիւ և արդէն պատրաստութիւններ են տեսնուում, որ մօտերս թերթը լոյս տեսնի։

ԳՈՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յունվարի 26-ին, «Աղբիւր»ի 25-ամեակը լրանալու օրը, նոյն ամսաթերթի խմբագրատանը ժողովուած հասարակութիւնը՝ բաղկացած գլխաւորապէս «Աղբիւր»ի աշխատակիցներից, ինչպէս նաև պատուաւոր հիւրերը յանձնարարեցին բժշկ. Բ. Նաւասարդեանին հրաւիրել յատկապէս մի ժողով՝ խորհրդակցելու համար, թէ ինչպէս տօնել «Աղբիւր»ի 25-ամեայ յօբելեանը։

Բ. Նաւասարդեանը կատարեց իւր վրայ դրած պարտաւորութիւնը, հրաւիրելով առաջին մասնաւոր հիւանդանոցում